



Մագնիսական բարձիկներով գնացքներ

Ինչպե՞ս մարդկանց ու տարատեսակ բեռներ հնարավորինս արագ հասցնել մի տեղից մեկ այլ տեղ: Այսօր այդ նպատակին ծառայում են մարդատար ու բեռնատար մեքենաները, սովորական գնացքները, նավերը, ուղղաթիռներն ու ինքնաթիռները: Այս փոխադրամիջոցներից յուրաքանչյուրն ունի իր առավելություններն ու թերությունները: Օրինակ, ինքնաթիռները շատ արագ են շարժվում և դա նրանց առավելությունն է, մինչդեռ մարդիկ ու բեռներ կարող են տեղափոխվել ամեն անգամ խիստ սահմանափակ քանակությամբ: Նույն թերությունն ունեն ուղղաթիռները, ավտոմեքենաները: Իսկ ահա սովորական գնացքը կարող է հսկայական քանակությամբ բեռներ ու մարդիկ տեղափոխել: Այս առավելությամբ հանդերձ գնացքը ինքնաթիռի նկատմամբ բավականաչափ դանդաղաշարժ է: Եթե մեկ ժամում ինքնաթիռն անցնում է մոտ 1000 կմ ճանապարհ, ապա գնացքը նույն ժամանակում հազիվ հաղթահարում է 80 կմ-ը: Իսկ հնարավոր չէ՞ արդյոք սրելո՞ծել արագընթաց գնացքներ: Պարզվում է՝ հնարավոր է: Գնացքի արագության մեծացմանը հիմնականում խանգարում են ռելսերը, որոնց հետ գնացքի անիվների շփումը արգելակում է նրա շարժումը: Բացի այդ, ռելսերի հետ շփումը սրելոծում է որոշակի աղմուկ, որը մարդատար գնացքներում անհարմարություններ է սրելոծում: Այս թերություններից միանգամայն ազատ է այսպես կոչված մագնիսական բարձիկներով գնացքը:



Նկ. 1. Մագնիսական բարձիկներով գնացք: Զարգացնում է մինչև 600 կմ/ժամ արագություն:

Այս գնացքում օգտագործվում են հզոր հաստատված մագնիսներ, որոնք տեղակայվում են գնացքի տակ, իսկ ռելսերի վրա հատուկ եղանակով սրելոծում են արհեստական՝ էլեկտրական հոսանքով առաջացող մագնիսներ: Գնացքի և ռելսերի մագնիսները մոտ են միմյանց նույնասուն բևեռներով, ինչի արդյունքում շարժման ժամանակ նրանք, վանելով իրար, գնացքը ռելսերից բարձրացնում են մոտ 5 սմ: Այսպիսով, այս նոր տիպի գնացքը անիվների կարիք չունի, այն փաստորեն շարժվում է օդում, առանց կպչելու ռելսերին: Ռելսերի հետ շփումը պրակտիկորեն վերանում է, ինչը հնարավորություն է տալիս գնացքի արագությունը զգալիորեն մեծացնել: Այսօր արդեն կան այդպիսի գնացքներ Ճապոնիայում, Չինաստանում, հարավային Կորեայում, եվրոպական երկրներում: Ներկայումս սրելոծվել են մագնիսական բարձիկներով գնացքներ, որոնց շարժման արագությունը հասնում է շուրջ 600 կմ/ժամ-ի: